

**ՀԱՄԿԱՑԱԿԱՆ ՏԻՊԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼԵԶՈՒՆԵՐԻ
ՏԻՊԱԲԱՆԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄ
Միրզոյան Ա. Ս.**

Սույն հոդվածում անդրադարձ է կատարվում լեզուների տիպաբանական դասակարգմանը, մասնավորապես՝ ձևաբանական տիպաբանության պատմական զարգացմանը, որի համատեքստում փորձ է արվում արժևորել Է. Սեպիրի առաջարկած հասկացական տիպաբանությունը ինչպես գիտական ճշտության, այնպես էլ լեզվաբանության զարգացման վրա ունեցած մեծագույն ազդեցության տեսանկյունից, ցույց է տրվում հասկացական տիպաբանության արդիականությունը: Ներկայացվում և քննվում են Է. Սեպիրի տեսության վրա հիմնվող որոշ ժամանակակից տեսություններ լեզուների տիպաբանական դասակարգման և պատմական ձևաբանության ոլորտում:

Բանալի բառեր. հասկացական տիպաբանություն, ձևաբանական տիպաբանություն, տիպաբանության պատմություն, լեզվական ընդհանրույթ, իմպլիկացիոն ունվերսալներ, ցիկլիկ էվոյուցիա, քերականացում

Լեզվաբանական տիպաբանությունն ուսումնասիրում ու դասակարգում է աշխարհի լեզուները՝ հիմնվելով նրանց կառուցվածքային ընդհանրությունների ու առանձնահատկությունների վրա: Տիպաբանական դասակարգումներն արվում են հնչույթի (հնչունաբանական և հնչութաբանական տիպաբանություն), բառի (ձևաբանական տիպաբանություն) և նախադասության (շարահյուսական տիպաբանություն) մակարդակներում:

Ժամանակակից լեզվաբանության մեջ հաճախ առանձնացնում են նաև վերջարահյուսական մակարդակի՝ տեքստի և տրամասության տիպաբանություն: Քանի որ ավանդաբար տիպաբանական

դասակարգումները կենտրոնացել են բառի վրա, ձևաբանական տիպաբանությունն առավել զարգացած է և ունի առավել ամբողջական դասակարգումներ: Այսուհանդերձ, ինչպես իր «Լեզու. խոսքի ուսումնասիրության ներածություն» աշխատությունում ասում է Էդվարդ Սեպիրը. «...անհնար է որոշել տիպերի սահմանափակ քանակ, որն արդարացված կլինի երկրի երեսին խոսվող հազարավոր լեզուների ու բարբառների առանձնահատկությունների հանդեպ»¹: Մեզ մոտ, ցավոք, դեռևս չկա լեզուների տիպաբանական դասակարգման մասին ժամանակակից գիտելիքի ամբողջացման փորձ: Այս հողվածում փորձելու ենք ներկայացնել լեզուների ձևաբանական տիպաբանության պատմական զարգացման ընդհանուր ուղեծիրը, ցույց տալ Է.Սեպիրի առաջարկած հասկացական տիպաբանության կարևորությունը լեզուների տիպաբանական դասակարգման ոլորտում, ինչպես նաև դրան հետևած որոշ տեսություններ ու մոտեցումներ՝ հասկացական տիպաբանության ունեցած նշանակության համատեքստում:

Ձևաբանական դեռևս առաջին դասակարգումներում առանձնացվում էին թեքականության ու կցականության գաղափարները: Ֆրիդրիխ Շլեգելը, առաջին անգամ անդրադառնալով այս խնդրին, լեզուները բաժանել է երկու խմբի՝ *թեքական* և *ոչ թեքական*: Լինելով դասական կրթությամբ գերմանացի մտավորական՝ Շլեգելը թեքական լեզուները համարել է կատարյալ, «օրգականական», իսկ ոչ թեքականները՝ անկատար ու «անօրգանական»: Ավգյուստ Շլեգելը առանձնացրեց նաև *անձն լեզուներ*, իսկ թեքականների համար մտցրեց նաև *համադրական* և *վերլուծական* կառույցների տարբերությունը: Համադրական կառույցի դեպքում քերականական իմաստներն արտահայտվում են բառի ներսում ձևի տարատեսակ փոփոխությունների միջոցով, իսկ վերլուծականի դեպքում՝ օժանդակ բառերի, բառերի դասավորության և հնչերանգի միջոցով:

Իրենց ժամանակակից անվանումներով այս տարատեսակներն առանձնացրեց Վ. Ֆոն Հումբոլտը, ընդ որում՝ նա առանձնացրեց *բազմահամադրական լեզուները*, որոնք համարում էր կցականի տեսակ: Հետագա ուսումնասիրողները ավելացրին տիպերի թիվը՝ ավելի ու ավելի ճշգրիտ պատկեր ստանալու համար: Սրանց թվում նշանակալի

¹ հմմտ. “...we know in advance that it is impossible to set up a limited number of types that would do full justice to the peculiarities of the thousands of languages and dialects spoken on the surface of the earth. “

E. Sapir, Language: An Introduction to the Study of Speech, NY, 1921, p. 59

են Շտայնթալի, Շլայխերի, Միստելիի, Ֆորտունովի դասակարգումները: Շտայնթալը լեզուների տիպաբանության հիմքում վերցնում էր ոչ միայն բառը, այլև նախադասությունը: Նա է ձևային և անձև լեզուների տարաբաժանման հեղինակը: Բառի ներքին փոփոխություններ չունեցող լեզուները նա անվանում էր *միավորոտ*: Այսպիսի լեզուների շարքում անձև էին համարվում, օրինակ, ինդոնեզական լեզուները, ձևային՝ չինարենը: Բառի ներքին փոփոխության ձև ունեցող լեզուները Շտայնթալը դասակարգում էր որպես *փոփոխական անձև*: Անձև փոփոխությունը, ըստ նրա, տեղի է ունենում կրկնությունների ու նախածանցների, ինչպես նաև ներմարմնավորման միջոցով: Փոփոխվող ձևային լեզուներում քերականական իմաստը փոխվում է տարրերի ավելացման միջոցով, ինչպես, օրինակ, եգիպտերենում:

Միստելին զարգացրեց Շտանթալի՝ ձևային և անձև լեզուների տարաբաժանումը, ինչպես նաև տարբերակեց անբառ, կեղծ-բառային և ճշմարիտբառային լեզուներ: Անբառ էին համարվում այն լեզուները, որոնցում չկան հայտնի իմաստով բառեր. այդպիսիք են եգիպտերենը, բանտուական լեզուները և այլն [4]: Կեղծ-բառային լեզուներում բառեր կարելի է տարբերակել, բայց դրանք լիարժեքորեն չեն համապատասխանում բառի նկարագրին: Այդպիսի լեզուներ են ուգրաֆիննական, թյուրքական, մոնղոլական լեզուները: Ճշմարիտ բառային լեզուները, որոնց թվին են պատկանում հնդեվրոպական ու սեմական լեզուները, առանձնանում են լիարժեք բառերի առկայությամբ: Բազմահամադրական լեզուները Միստելին առանձնացնում էր որպես անձև լեզուներ, քանի որ դրանցում նախադասությունն ու բառը մեկ ամբողջություն են:

Է. Սեպիրն իր՝ 1921 թվականին լույս տեսած «Լեզու. խոսքի ուսումնասիրության ներածություն» աշխատության մեջ անդրադառնում է լեզվի գրեթե բոլոր դիտանկյուններին՝ դրա սահմանումից ու հնչութաբանությունից մինչև կառուցվածքն ու տիպաբանությունը:

Է. Սեպիրը քննադատում է այն ըմբռնումը, ըստ որի՝ կան «ձևային» և «անձև» լեզուներ: Նա նշում է, որ աշխարհի բոլոր լեզուները կարող են և պիտի արտահայտեն հիմնարար շարահյուսական հարաբերություններ, անգամ եթե դրանցում նույնիսկ մեկ ածանց չկա: Գոյություն չունեն իրապես անձև լեզուներ, ու թեև կարելի է խոսել ձևական առումով «անձևության» մասին, սա մնում է խիստ մակերեսային ըմբռնում: Սրանով նա մերժում է նաև շտայնթալյան ընկալումն այն մասին, որ գոյություն ունի «ներքին ձև» այնքանով,

որքանով այն ենթադրում է դուալիստական տարաբաժանում՝ ընդունելով «ներքին անձնության» հնարավորությունը: Նա նշում է, որ առավել բնական կլիներ ֆորմալ գործընթացների վրա հիմնված տարաբաժանումը:

Մեպիրը չի հրաժարվում «վերլուծական», «համադրական» և «բազմահամադրական» հասկացություններից, սակայն առաջարկում է դրանք կիրառել ոչ թե բացարձակ կերպով, այլ հաշվի առնելով լեզուն որպես ամբողջականություն և դիտարկելով այն բազմակողմանիորեն:

Այսպես, *վերլուծական* են կոչվում այն լեզուները, որոնցում բառերը կապվում են ոչ թե բառափոխության, այլ սպասարկու բառերի և բառերի հերթականության շնորհիվ: Այսպիսի լեզուներում հասկացությունները կամ չեն միավորվում մեկ բառի մեջ առհասարակ, ինչպես չինարենում է, կամ էլ շատ քիչ են օգտվում դրանից, ինչպես ֆրանսերենում է: *Համադրական* լեզուներում, ընդհակառակը, բառի փոփոխություններն են քերականական իմաստ փոխում և կապում բառերն իրար: Այսպիսին են, օրինակ, լատիներենն ու արաբերենը: *Բազմահամադրական լեզուները*, ինչպես է. Մեպիրն է ձևակերպում, էլ ավելի համադրական են [նույն տեղում]: Դրանք նույնքան կապված են համադրական լեզուներին, որքան համադրական լեզուներն են կապված վերլուծական անգլերենին: Այս բոլոր նկատառումներից ելնելով՝ է. Մեպիրը ստեղծում է ձևաբանական տիպաբանության մի նոր համակարգ, որով կարողանում է միավորել նախորդ տիպաբանությունների տարբեր սկզբունքները և ցույց տալ այն նրբությունները, որոնք այդ բացարձակացնող տարաբաժանումներով համոզիչ կերպով չեն համակարգվել:

Է. Մեպիրի առաջարկած ձևաբանական դասակարգման եղանակը կոչվում է *հասկացական դասակարգում*: Այս դասակարգման հիմքում նա դնում է երեք չափանիշ՝

- ա) արտահայտված հասկացությունների տիպերը,
- բ) հարաբերությունների արտահայտման տեխնիկան,
- գ) սինթեզի աստիճանը քերականության մեջ: [4]

Այսպիսով, հասկացությունների արտահայտման տեսանկյունից

Մեպիրն առանձնացնում է չորս տիպի լեզուներ.

- Պարզ մաքուր-ռեյացիոն լեզուներ
- Բարդ մաքուր-ռեյացիոն լեզուներ
- Պարզ խառը-ռեյացիոն լեզուներ
- Բարդ խառը-ռեյացիոն լեզուներ

Պարզ մաքուր ռեյսցիոն են այն լեզուները, որոնցում առհասարակ գոյություն չունի մասնիկավորում, և հիմնական հասկացություններն արտահայտվում են առանձին բառերով: *Բարդ մաքուր-ռեյսցիոն լեզուներում*, ընդհակառակը, քերականական փոփոխությունները կատարվում են մասնիկավորման և բառի ներքին փոփոխությունների միջոցով: Պարզ խառը-ռեյսցիոն լեզուներում շարահյուսական հարաբերություններն արտահայտված են անհրաժեշտ կապի մեջ այնպիսի հասկացությունների հետ, որոնք ամբողջովին գուրկ չեն հստակ նշանակությունից, սակայն որոնք չեն կարող մասնիկների կամ ներքին փոփոխությունների միջոցով փոխել իրենց արմատական տարրերի նշանակությունը: *Բարդ խառը-ռեյսցիոն լեզուների* մեջ են մտնում ամենից հայտնի թեքական լեզուները, ինչպես նաև մեծ քանակությամբ կցական լեզուներ, որոշ համադրական, որոշ բազմահամադրական լեզուներ:

Հարաբերությունների արտահայտման տեխնիկայի տեսանկյունից լեզվական բոլոր միջոցները խմբավորվում են չորս հիմնական կատեգորիաներում՝ *անջատում, կցում, ֆուզիա (ձուլում)/թեքում* և *խորհրդանշանացում*: Հասկացությունների արտահայտման տեսանկյունից առանձնացված չորս տիպերից յուրաքանչյուրը բաժանվում է երեք հիմնական խմբի՝ *թեքական, կցական* և *խորհրդանշանային*: Պարզ մաքուր-ռեյսցիոն լեզուների պարագայում տարբերակվում է նաև *անջատական* խումբը:

Ի վերջո, քերականության մեջ սինթեզի աստիճանի տեսանկյունից լեզուները բաժանվում են *վերլուծական, համադրական* և *բազմահամադրական* տեսակների:

Հարկ է նկատի առնել, որ այդ համակարգում հաշվի են առնվում ոչ միայն այս հիմնական խմբերը, այլև դրանց տարատեսակները. մի լեզուն, օրինակ, կարող է միաժամանակ լինել և՛ թեքական, և՛ խորհրդանշանային՝ առավել թեքական լինելով:

Աղյուսակ 1.

Սեպիրի լեզուների տիպաբանական դասակարգումը

Հիմնական տիպը	II	III	IV	Տեխնիկա	Սինթեզ	Օրինակներ
Պարզ մաքուր-ռեյսցիոն	–	–	a	անջատական	վերլուծական	չինարեն, աննամերեն
	(d)	–	a, b	անջատական (թույլ կցական)	վերլուծական	Էվե (Գվինեա)

	(b)	—	a, b, c	կցական (չափավոր կցական թեքական)	վերլուծական	արդի տիրեթերեն
Բարդ մաքուր- նեյացիոն	b, (d)	—	a	կցական- անջատական	վերլուծական	պոլինեզիական լեզուներ
	b	—	a,(b)	կցական- անջատական	բազմահա- մադրական	հայիդա
	c	—	a	թեքական- անջատական	վերլուծական	կամբոջերեն
	b	—	b	կցական	համադրական	թուրքերեն
	b, d	(b)	b	կցական (խորհրդա- նշային երանգ)	բազմահամա- դրական	յանա (Հս. Կալիֆոռնիա)
	c, d, (b)	—	a, b	թեքական- կցական (խորհրդա- նշային երանգ)	համադրական (չափավոր)	դասական տիրեթերեն
	b	—	c	կցական- թեքական	համադրական (չափավոր բազմահամա- դրական)	սիու
	c	—	c	թեքական	համադրական	սալինան
d, c	(d)	d, c, a	խորհրդա- նշային	վերլուծական	սիլուկ (Վերին Նեդոս)	
Պարզ խառը- նեյացիոն	(b)	b	—	կցական	համադրական վերլուծական (չափավոր համադրական)	բանտու ֆրանսերեն
	(c)	c, (d)	a	թեքական		
Բարդ խառը- նեյացիոն	b, c, d	b	b	կցական (խորհրդա- նշային երանգ)	բազմահամա- դրական	նուտկա
	c,(d)	b	—	թեքական- կցական	բազմահամա- դրական (չափավոր)	չինուկ
	c,(d)	c, (d), (b)	—	թեքական	բազմահամա- դրական	ալգոնկին
	c	c, d	a	թեքական	վերլուծական	անգլերեն

	c, d	c, d	—	թեքական (խորհրդա- նշային երանգ)	համադրական	լատիներեն, հունարեն, սանսկրիտ
	c, d, b	c, d	(a)	թեքական (խիստ խորհրդա- նշային)	համադրական	տակելվա
	d, c	c, d	(a)	Խորհրդա- նշային- թեքական	համադրական	արաբերեն, եբրայերեն

ՄԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. անջատման գիծը նշանակում է, որ տվյալ գործընթացը թույլ է զարգացած:

Հարկ է նշել, որ a, b, c, d համապատասխանաբար ցույց են տալիս անջատման, կցման, ֆուզիայի/թեքման և խորհրդանշանացման գործընթացները: Երբ մեկից ավելի տեխնիկա է առկա, աղյուսակում դրանք դասավորված են ըստ կարևորության աստիճանի:

II, III, IV սյունակները հղվում են հետևյալ հասկացության խմբերին.

- II - ածանցողական, օրինակ՝ նվազական ձևերը
- III - խառը/կոնկրետ ռացիոնալ, օրինակ՝ թվի համաձայնությունը
- IV - մաքուր ռելյացիոն, օրինակ՝ ենթակայի նշանակումը ուղղական հոլովով

Հասկացական տիպաբանությունը ներկայացնելով՝ Մեպիրը հաջողությամբ դասակարգում է մի շարք լեզուներ, ինչպես նաև կարողանում է ցույց տալ քերականական հատկանիշների այնպիսի հատման կետեր, որոնք անցյալում չէին նկատվել լեզվաբանների կողմից, կամ, լավագույն դեպքում, պատշաճ ուշադրության չէին արժանացել: Այսքանով հանդերձ՝ այս դասակարգումը զերծ չէ թերություններից: Մեպիրն ինքն է սա ընդունում՝ նշելով, որ որոշ լեզուների դեպքում սահմանը դժվար է գծել տիպերի միջև, ինչպես նաև իրավացիորեն նկատելով, որ լեզուները բարդ պատմական կառույցներ են, ուստի, թերևս, դրանց դասակարգման որևէ փորձ եթե դատապարտված չէ սխալվելու, ապա առնվազն կանգնում է դրա մեծ վտանգի առաջ յուրաքանչյուր քայլափոխի:

Է. Մեպիրի հասկացական տիպաբանությունն իր ժամանակի ամենաառաջադիմական և ամբողջական դասակարգումն է: Հետո եկած գիտնականները մեծապես ազդվել են նրանից: Այս համատեքստում հատկապես կարևոր է հիշատակել Ջ. Գրինբերգին, որի տեսությունը հիմնվում է Մեպիրի հասկացական տիպաբանության վրա: Գրինբերգի

տիպաբանությունը կոչվում է *քանակական տիպաբանություն* և իր արտահայտությունն է գտել գիտնականի «Քանակական մոտեցում լեզուների ձևաբանական դասակարգմանը» աշխատությունում:

Ի տարբերություն Է. Մեյիիի՝ Ջ. Գրինբերգն իր դասակարգման հիմքում դնում է հինգ չափանիշ և տալիս է մեկ կամ ավելի ինդեքսներից բաղկացած շարք, որով որոշվում է լեզուների տեղն այդ չափանիշներից յուրաքանչյուրի համեմատ: Այս մեթոդը, անշուշտ, առավել ճշգրիտ է, քանի որ քանակական հաշվարկների հետ գործ ունենալով՝ կարողանում է առավել ստույգ ցույց տալ լեզուների տեղը: [7]

Ինչպես Նոամ Չոմսկին, Գրինբերգը ևս փորձում էր գտնել այն համընդհանուր կառույցները, որոնց վրա հիմնվում է մարդկային լեզուն, սակայն ի տարբերություն ֆորմալիստական մեթոդով առաջնորդվող Չոմսկու՝ Գրինբերգը մեթոդական առումով ֆունկցիոնալիստ էր: Գրինբերգն է ձևակերպել *իմպլիկացիոն ունիվերսալների* գաղափարը, որը մինչ օրս լեզվական ընդհանրությունների որոշման համար կենտրոնական նշանակություն ունի:

Հենվելով Մեյիիի մոտեցումների վրա՝ Գրինբերգը նաև խորապես ուսումնասիրում ու ներկայացնում է հնչութային ընդհանրությունները համաժամանակյա տեսանկյունից, ինչպես նաև տեսական հիմք է տալիս ընդհանրությունների համաժամանակյա և տարաժամանակյա հայեցակարգերի համար [6]:

Հարկ է նշել, որ առաջարկվում են այլ մոդելներ ևս, որոնք հիմնականում հենվում են այն քննադատության վրա, որ վերը ներկայացված դասակարգումները ցույց չեն տալիս քերականական կատեգորիաների միջև այն բոլոր բարդ տրամախաչումները, որոնք գոյություն ունեն լեզվում: Այսպես, Ջենիֆեր Գարլանդը բերում է սինհալա լեզվի օրինակը՝ ցույց տալով, որ թեև դրա ածանցները, կլիտիկներն ու հետադրությունները պիտի, ըստ ավանդական ընկալման, ընդունվեին որպես կցման դեպք, դրանք չափազանց սերտաճած են արմատին, բայց այդ լեզվի դասակարգումը որպես թեքական ևս խիստ սխալ է: [3]

Ցիկլիկ էվոլյուցիայի տեսության կողմնակիցները կարծում են, որ սովորաբար լեզուները զարգանում են թեքականներից դեպի վերլուծականներ, վերլուծականներից դեպի կցականներ և կցականներից կրկին թեքականներ: Ռ. Մ. Վ. Դիքսոնն այս գործընթացը համեմատում է ժամացույցի սլաքի ընթացքի հետ և նշում, որ, օրինակ, հին չինարենը մոտավորապես կհամապասխաներ ժամը 3:00-ին,

այսինքն՝ կլիներ մեծ մասամբ վերլուծական՝ որոշ թեքական տարրերով: Եզիպտերենը, լինելով հազարամյակների գրավոր պատմությամբ լեզու, ըստ Դիքսոնի, անցել է ամբողջ շրջանը [2]: Նմանատիպ տեսություններ առաջարկվել են նաև հետագայում: Այսպես, Էլլի վան Գելդերենը լեզվի փոփոխությունների օրինաչափությունները ներկայացնում է որպես շրջապտույտ [5]: Սրա օրինակ է *քերականացումը* (grammaticalization): Սա այն երևույթն է, երբ բառային միավորները վերածվում են քերականական նշանակիչների, իսկ հետագայում նոր լեզվական միավորներ են գալիս դրանց փոխարինելու: Քարլթոն Հոջն առաջարկում է եզիպտերենի զարգացման հետևյալ շրջապտույտը.

Աֆրասիական նախալեզու—վերլուծական

Հին եզիպտերեն—համադրական

Ուշ եզիպտերեն—վերլուծական

Ղպտիերեն—համադրական [8]

Իր թերություններով հանդերձ, սակայն, Սեպիրի տիպաբանությունը հեղափոխական նշանակություն ունեցավ, և հետագա դասակարգումներն ու ածանցվող տեսական ըմբռնումները ինչ-որ կերպ առնչվում են Սեպիրի համակարգային մոտեցմանը: Կարելի է ասել, որ թեև հետագա տեսությունները լրացրել ու ճշգրտել են այն, անդրադարձել որոշ լեզուների սխալ դասակարգումների կամ մատնանշել նոր օրինաչափություններ, Սեպիրի առաջարկած դասակարգումը սկզբունքորեն ճիշտ է մնում, իսկ նրա «Լեզուն» ձևաբանական տիպաբանության ոլորտի իրապես կապիտալ աշխատություն է: Սեպիրը դասակարգման հիմքում դնում է բառերի քերականական հարաբերությունները՝ դրանք քննելով երեք տարբեր տեսանկյուններից, առանձնացնում խմբեր, որոնց միջոցով ստեղծում է մի կառույց, որում լեզուները ոչ թե ուղղակիորեն դասակարգվում են այս կամ այն հատկանիշից ելնելով, այլ այդ խմբերի ու տիպերի համադրմամբ. սա ուղղակիորեն փոխել է լեզվաբանական տիպաբանության ընթացքը՝ ընդլայնելով դրա հնարավորությունները: Սեպիրը, ընդ որում, կարողանում է ոչ միայն լեզվաբանորեն հիմնավորել իր դասակարգումը, այլև փիլիսոփայորեն քննադատել իր նախորդների մոտեցումները և անդրադառնալ քերականության հոգեբանական ասպեկտներին՝ մի ամբողջ ոլորտի ճանապարհ բացելով: Սեպիրը ճշգրտորեն դասակարգում է մի շարք լեզուներ՝ որոշ պարագաներում մանրամասնորեն անդրադառնալով դրանց քերականության բազում նրբությունների: Այս ամենը թույլ է տալիս

Սեպիրի հասկացական տիպաբանությունն արդարացիորեն համարել այս ոլորտում ամենահիմնավոր ու կարևոր խոսքերից մեկը:

Լեզուների տիպաբանական դասակարգման պատմությանը զցված հայացքը ոչ միայն հնարավորություն է տալիս համակարգված կերպով ներկայացնել լեզուների դասակարգման հետ կապված հարցերը, այլև ցույց է տալիս դրանում հասկացական տիպաբանության կարևորագույն դերը: Սեպիրի առաջարկած համակարգը հիմք է ծառայում այս ոլորտում արվող ժամանակակից հետազոտությունների և տեսությունների համար: Ջ. Գրինբերգի դասակարգումն այսօր, թերևս, ամենահիմնավոր ամբողջական խոսքն է տիպաբանական դասակարգման մեջ: Ժամանակի հեռավորությունից գնահատելով հասկացական տիպաբանությունն ու դրա ազդեցությունը՝ տեսնում ենք դրա բեկումնային նշանակությունը լեզուների տիպաբանական դասակարգման հարցում: Ռ. Մ. Վ. Դիքսոնի, Ջ. Գարլանդի և այլոց տեսական համակարգերը, ըստ էության, կառուցվում են սեպիրյան համակողմանի մոտեցման վրա: Մրանց կիրառումը հայոց լեզվի ուսումնասիրության մեջ կարող է մեզ լեզվի պատմության ու կառույցի մասին լիովին նոր, հիմնավոր գիտելիք տալ: Հասկացական տիպաբանությանն ուղղված քննադատությունները մեծապես վերաբերում են առանձին լեզուների դասակարգման դժվարություններին կամ անհնարինությանը, սակայն այս մոտեցման հիմնավոր, համակարգային քննադատություն, կարելի է ասել, այսօր չկա:

КОНЦЕПТУАЛЬНАЯ ТИПОЛОГИЯ И ТИПОЛОГИЧЕСКАЯ КЛАССИФИКАЦИЯ ЯЗЫКОВ

Мирзоян А. С.

В данной статье рассматривается история типологической классификации языков, в частности, морфологическая типология, в контексте которой сделана попытка оценить концептуальную типологию, предложенную Э. Сепиром, как с точки зрения научной точности, так и с точки зрения величайшего влияния на развитие лингвистики в целом. Показывается актуальность концептуальной типологии. Представлены и рассмотрены современные теории в области лингвистической типологии и исторической морфологии, которые опираются на теорию Э. Сепира.

Ключевые слова: концептуальная типология, морфологическая типология, история типологии, языковая универсалия, имплицативные универсалии, циклическая эволюция, грамматизация.

CONCEPTUAL TYPOLOGY AND TYPOLOGICAL CLASSIFICATION OF LANGUAGES

Mirzoyan A. S.

The present article dwells on the history of typological classification of languages, particularly morphological typology, in the context of which it is attempted to evaluate the conceptual typology suggested by E. Sapir, from the standpoint of scientific accuracy as well as the immense influence on the development of linguistics in general. The article aims to show the actuality and relevance of conceptual typology. Contemporary theories in the field of linguistic typology and historical morphology that derive from E. Sapir's theory, are presented and examined.

Keywords: conceptual typology, morphological typology, history of typology, linguistic universal, implicational universals, cyclical evolution, grammaticization.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Sapir E. Language: An Introduction to the Study of Speech, NY, Harcourt, Brace. 1921. 59 p.
2. Dixon R. M. W. The Rise and Fall of Languages, Cambridge, Cambridge University Press. 1998. 176 p.
3. Garland J. Morphological Typology and the Complexity of Nominal Morphology in Sinhala, Santa Barbara.// Santa Barbara Papers in Linguistics. 17. 2005. P. 1-19.
4. Березин Ф. М., Головин Б. Н. Общее языкознание. М. Просвещение. 1979. 416 с.
5. van Gelderen E. The Linguistic Circle and the Language Faculty// Language and Linguistics Compass. 7/4. 2013. P. 233-250.
6. Greenberg J. Synchronic and Diachronic Universals in phonology.// Language. 42 (2). 1966. P. 508-517.

7. Greenberg J. Language Universals: with Special Reference to Feature Hierarchies. The Hague: Mouton & Co.. 1966. 109 p.
8. Hodge C., The Linguistic Cycle.// Linguistic Sciences. 13. 1970. P. 1-7.

Տեղեկություններ հեղինակի մասին

Միրզոյան Ա. Մ. - ուսանող

Երևանի պետական համալսարան

Էլ. փոստ mirzoianarthur@gmail.com

Տրվել է խմբագրություն 05.02.2020